Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագիր (ՏԻԱԲ)

Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ: Ծրագիրը մեկնարկել է 2022թ. դեկտեմբերի 1-ին և նախատեսվում է ավարտին հասցնել 2027թ. նոյեմբերի 30-ին:

Ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչից՝

1. **Տեխնիկական օժանդակություն հաշվետվողական կառավարման և կարողությունների զարգացման ուղղությամբ:**
   Այս բաղադրիչի ներքո նախատեսվում է ՏԻՄ ներկայացուցիչներին և ինստիտուտներին տրամադրել տեխնիկական աջակցություն կամ ուսուցում՝ հանրային կարողությունների և հանրային կառավարման հաշվետվողականության բարելավման նպատակով: Այս բաղադրիչի շահառուներն են հանդիսանում՝ ավագանու անդամները, ընտրված համայնքապետերը և հանրային ոլորտի այլ ներկայացուցիչները:

2. **Քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների բարելավում և համայնքային զարգացման նախաձեռնությունների ուժեղացում:**
   Այս բաղադրիչի ներքո նախատեսվում է բարելավել ՏԻՄ ինստիտուտների կողմից հանրային ծառայությունների քանակն ու որակը, բարձրացնել պլանավորման արդյունավետությունը, հիմնել պահանջված հանրային ծառայություններ և զարգացնել համայնքները:

3. **Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ արագ և արդյունավետ արձագանքելու արտակարգ վիճակներից տուժած բնակչությանը:**
   Այս բաղադրիչի ներքո նախատեսվում է օժանդակել համայնքներին, որպեսզի վերջիններս արդյունավետորեն աջակցեն արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանը:

4. **Օժանդակություն Հայաստանի կառավարությանը՝ բարելավելու իր ապակենտրոնացման քաղաքականությունը:**
   Այս բաղադրիչի ներքո նախատեսվում է սահմանափակ տեխնիկական օժանդակություն ցուցաբերել կառավարությանը՝ միջգերատեսչական, ինչպես նաև ազգային-միջազգային ոլորտի համագործակցությունը խորացնելու, ապակենտրոնացման գործընթացն ուսումնասիրելու և նյութեր տրամադրելու, օրենսդրական նախագծեր մշակելու, ապակենտրոնացման մոդելներ փորձարկելու և հաստատելու, ինչպես նաև ապակենտրոնացման գործընթացում հասարակության հետ կապերը բարելավելու ձևով:

Ծրագրի իրականացման ընթացքում ընտրվել են 8 թիրախային համայնքներ՝ 5 մարզից: Դրանք են՝ Սյունիքի մարզում՝ Գորիսը և Կապանը, Գեղարքունիքի մարզում՝ Մարտունին և Վարդենիսը, Տավուշի մարզում՝ Բերդն ու Նոյեմբերյանը, Արմավիրի մարզում՝ Մեծամորը և Արագածոտնի մարզում՝ Թալինը:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- ՏԻՄ կառավարման համակարգերի, գործընթացների, մասնակցային պլանավորման, բյուջետավորման և կառավարման գործիքների ու կարողությունների ուժեղացում,
- ՏԻՄ քաղաքացիների խորհրդատվական և ռազմավարական հաղորդակցման գործընթացների «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով գործարկում,
- ՏԻՄ կողմից հանրային ծառայությունների արդյունավետ կառավարման կարողությունների ուժեղացում,
- Ծառայությունների մատուցման ջանքերի ուղղությամբ քաղաքացիների գոհունակության աճ,
- Արտակարգ աղետների ռիսկի նվազեցման քաղաքականությունն ու ընթացակարգերը մշակված և փորձարկված են,
- Տեղահանված և այլ խոցելի բնակչությանը տրամադրվում է օգնություն՝ վերականգնման ուղղությամբ,

- Ամրապնդվում են օրենսդրական շրջանակները, ինստիտուցիոնալ կարողությունները և ապակենտրոնացման գործընկերությունը,
- Հետազոտվում և փորձարկվում են նոր իրավասությունների ապակենտրոնացման հնարավորությունները։